

2019 թվականի փետրվարի 6-ին ժամը 14⁰⁰–ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի անդամների ընդհանուր ժողով

Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ՝ Համլետ Կուրդինյանը: Համայնքի անդամներից ներկա էին 50 բնակիչներ, դպրոցի տնօրենը, համայնքապետարանի աշխատակիցներ և ավագանու անդամների 7-ից 6-ը:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2018 թվականի կատարած աշխատանքների մասին
Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Մ.Սկրտչյան**

Հարգելի Ծաղկալանջ համայնքի բնակիչներ, հյուրեր. Ձեզ են ներկայացնում 2018 թվականի ընթացքում համայնքապետարանի և ավագանու կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

2018 թվականի ընթացքում համայնքապետարանը և ավագանին իր գործունեությունը իրականացրել է 2018 թվականին կազմած աշխատանքային ծրագրին համապատասխան՝ ըստ բնագավառների: Բարելավել ենք հանդամիջյան ճանապարհները, ամիսը 4 անգամ կատարվել է աղբաթափություն, որի համար հատկացվել է 996.000 դրամ գումար: Մասամբ վերանորոգվել է կուլտուրայի տան տանիքը, վերանորոգվել է նաև գրադարանը, գյուղապետարանին հատկացված տարածքի մի մասը: Կուլտուրայի տանը վերանորոգվել և տրամադրվել է տարածք համայնքի բնակիչներին, ազատ ժամանակն անցկացնելու համար:

Կազմակերպվել և հաշվետվություններ են ներկայացվել վիճակագրական ծառայությանը անասնազխաքանակի, բնակչության սեռատարիքային

շարժի, բերքահավաքի և գարնանացանի տվյալների մասին: Եկամուտների, ծախսերի և աշխատավարձի մասին հաշվետվություններ են ներկայացվել Արմավիրի մարզպետարան, եռամսակային հաշվետվություններ են ներկայացվել հարկային տեսչություն: Կադաստրի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել շենքերի և շինությունների կառուցման և քանդման շարժի մասին:

2018 թվականի ընթացքում բնակիչներից գանձվել է 2.216.750 դրամ հողի հարկ , որը կազմում է պլանայինի 42.2 % -ը, 3.368.600 դրամ գույքահարկ , որը կազմում է պլանայինի 84 %ը,և վարձակալական հողի վարձավճար 184.800 դրամ ` պլանայինի 26.8 % -ը:Համայնքի դպրոցի և գյուղի երիտասարդության հետ համատեղ կազմակերպվել է երիտասարդական միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 73 ամյակին և Շուշիի ազատագրման 26 ամյակին:Կազմակերպվել է միջոցառում նաև գիտելիքի և գրադարանավարի օրվան նվիրված:

2018 թվականի ընթացքում ստացվել և պատասխանվել է 495 գրություն: Կայացել է ավագանու 7 նիստ և քննարկվել է 28 հարց, ընդունվել է համապատասխան որոշումներ:

Համայնքն ունի 35 նպաստառու ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին իրենց դիմումների և ավագանու որոշմամբ տրվել է դրամական օգնություններ` 1.798.000 դրամ:

2018 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 17 երեխա, արձանագրվել է 9 մահ, անուսնացողների թիվը հասնում է 13-ի:

Ընդունվել է գյուղապետի 29 որոշում, ընդունվել է 50 դիմում, որոնք բոլորն էլ ստացել են համապատասխան լուծումներ: Համայնքի բնակչությանը տրվել է համապատասխան ոլորտի 315 տեղեկանքներ: Համայնքապետարանը աշխատավարձի պարտք չունի:

Գյուղում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել Ձեզ և մարզպետարանի ներկայացուցչին, քանզի նշված խնդիրները գյուղապետարանի միջոցներով հնարավոր չէ իրականացնել.

1. Մշակույթի տունը վերակառուցման և վերանորոգման անհրաժեշտություն ունի, բնակչությունը մշակութային միջոցառումներ չեն կարող կատարել, անգամ իր ազատ ժամանակը սովորական խաղերով անցկացնելու վայր չունի :
2. Չի գործում մանկապարտեզը՝ համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով, նախկին շենքը կարիք ունի վերանորոգման:
3. Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ հողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է գերծախսի ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:
4. Խմելու ջրի ներքին ցանցը նույնպես անմխիթար վիճակում է ,որը վերանորոգման կարիք ունի:

Գյուղում կատարվող բոլոր երևույթները համայնքապետարանի ուշադրության կենտրոնից դուրս չեն մնում, կա սերտ կապվածություն գյուղացու և համայնքապետարանի միջև: Սիրելի համագյուղացիներ Ձեր բոլոր գրավոր և բանավոր դիմումները և խնդրանքները քննարկվում են և հնարավորության սահմաններում տրվում են համապատասխան լուծումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

2018 թվականի հունվարի 22-ին ժամը 14⁰⁰ –ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի անդամների ընդհանուր ժողով

Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ՝ Համլետ Կուրդինյանը: Համայնքի անդամներից ներկա էին 70 բնակիչներ, դպրոցի տնօրենը, համայնքապետարանի աշխատակիցներ և ավագանու անդամների 7-ից 6-ը:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2017 թվականի կատարած աշխատանքների մասին
Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Մ.Սկրտչյան**

Հարգելի Ծաղկալանջ համայնքի բնակիչներ, հյուրեր. Ձեզ են ներկայացնում 2017 թվականի ընթացքում համայնքապետարանի և ավագանու կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

2017 թվականի ընթացքում համայնքապետարանը և ավագանին իր գործունեությունը իրականացրել է 2017 թվականին կազմած աշխատանքային ծրագրին համապատասխան՝ ըստ բնագավառների: Բարելավել ենք հանդամիջյան ճանապարհները, ամիսը 4 անգամ կատարվել է աղբաթափություն, որի համար հատկացվել է 996.000 դրամ գումար:

Համայնքի 13 –րդ փողոցի գազաֆիկացման համար համայնքի բյուջեի միջոցներով գնվել են գազատար խողովակներ: 16,17,18 և 19-րդ փողոցների խմելու ջրի ջրամատակարարման նպատակով գնվել է ջրի

խողովակներ և տարվում են աշխատանքներ վերը նշված փողոցներում գազաֆիկացման և խմելու ջրի ջրամատակարարման համար:

Կազմակերպվել և հաշվետվություններ են ներկայացվել վիճակագրական ծառայությանը անասնազխաքանակի, բնակչության սեռատարիքային շարժի, բերքահավաքի և գարնանացանի տվյալների մասին: Եկամուտների, ծախսերի և աշխատավարձի մասին հաշվետվություններ են ներկայացվել Արմավիրի մարզպետարան, եռամսակային հաշվետվություններ են ներկայացվել հարկային տեսչություն: Կադաստրի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել շենքերի և շինությունների կառուցման և քանդման շարժի մասին:

2017 թվականի ընթացքում բնակիչներից գանձվել է 2.853.300 դրամ հողի հարկ , որը կազմում է պլանայինի 76 % -ը, 3.190.800 դրամ գույքահարկ , որը կազմում է պլանայինի 77 %ը,և վարձակալական հողի վարձավճար 665.500 դրամ ` պլանայինի 96 % -ը:Համայնքի դպրոցի և գյուղի երիտասարդության հետ համատեղ կազմակերպվել է երիտասարդական միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 72 ամյակին և Շուշիի ազատագրման 25 ամյակին : Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված դպրոցի շրջանավարտների վերջին զանգին,հատկացվել է 200.000 դրամ:Կազմակերպվել է միջոցառում նաև գիտելիքի և գրադարանավարի օրվան նվիրված:

2017 թվականի ընթացքում ստացվել և պատասխանվել է 203 գրություն: Կայացել է ավագանու 8 նիստ և քննարկվել է 28 հարց, ընդունվել է համապատասխան որոշումներ:

Համայնքն ունի 28 նպաստառու ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին իրենց դիմումների և ավագանու որոշմամբ տրվել է դրամական օգնություններ` 1.907.500 դրամ:

2017 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 18 երեխա, արձանագրվել է 8մահ, ամուսնացողների թիվը հասնում է 15-ի:

Ընդունվել է գյուղապետի 29 որոշում, ընդունվել է 50 դիմում, որոնք բոլորն էլ ստացել են համապատասխան լուծումներ: Համայնքի բնակչությանը տրվել է համապատասխան ոլորտի 321 տեղեկանքներ: Համայնքապետարանը աշխատավարձի պարտք չունի:

2017թվականի նոյեմբերի 5-ին համայնքում տեղի է ունեցել համայնքապետի ընտրություններ: Վերընտրվել են կրկին համայնքապետ: Գյուղում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել Ձեզ և մարզպետարանի ներկայացուցչին, քանզի նշված խնդիրները գյուղապետարանի միջոցներով հնարավոր չէ իրականացնել:

3. Մշակույթի տունը վերակառուցման և վերանորոգման անհրաժեշտություն ունի, բնակչությունը մշակութային միջոցառումներ չեն կարող կատարել, անգամ իր ազատ ժամանակը սովորական խաղերով անցկացնելու վայր չունի :

4. Չի գործում մանկապարտեզը` համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով, նախկին շենքը կարիք ունի վերանորոգման:

3. Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ հողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է գերծախսի ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:

4. Խմելու ջրի ներքին ցանցը նույնպես անմխիթար վիճակում է ,որը վերանորոգման կարիք ունի:

Գյուղում կատարվող բոլոր երևույթները համայնքապետարանի ուշադրության կենտրոնից դուրս չեն մնում, կա սերտ կապվածություն գյուղացու և համայնքապետարանի միջև: Սիրելի համագյուղացիներ Ձեր բոլոր գրավոր և բանավոր դիմումները և խնդրանքները քննարկվում են և հնարավորության սահմաններում տրվում են համապատասխան լուծումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

